VERATSNUND | July 13, 1945

ԴՈԿՏՈՐ ՊՐՆ. ՀԻՒԼԵՏՏ ՋՈՆՍՈՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

2.

Ես հաւատում եմ Սովետական Հայաստանի և հայ ժողովրդի մեծ ապագային։ Նա կարող է հպարտանալ այս պատերազմում կատարած իր սխրագործութիւններով։ Ես ողջունում եմ Սովետական Հայաստանը. թող նա ծաղկի ու կեցցէ, թող նրա առաջ բացուի կոլեկտիւ ստեղծագործ աշխատանքի և նրա հիանալի կուլտուրայի հետագայ ծաղկման խաղաղ դարաշրջանը (ծափահարութիւններ)։

Թղթակիցներից մէկի այն հարցին, թէ դոկտոր Ջոնսոնը չի հայտնի արդեօք իր տպաւորութիւնները Հայ Եկեղեցական ժողովի մասին, պրն Ջոնսոնն ասաց.

— Հայ եկեղեցու քրիստոնէական կրօնի հնագոյն ճիւղերից մէկի վերածնումը, որին մենք պարտական ենք այնքան շատ բանով, ինձ համար առաջնակարգ կարևորութիւն ունեցող իրադարձութիւն է։

Սովետական իշխանութեան հոչակած խղճի ազատութեան և բոլոր դաւանանքների հաւասարութեան համապատասխան հայ եկեղեցին այժմ ունում է նոր կեանք և նո-

(Շար. տես Դ. սիւնակ)

(Շար. Ա. սիւնակից)

բից ստանում է իր նախկին հիմնարկութիւնները էջմիածնում. պլանաւորւում է գրադարանի վերաստեղծումն ու վերանորոգումը, հոգևոր սեմինարիայի և ակադեմիայի ստեղծումը։ Եկեղեցին հնարաւորութիւն ունեցաւ ամբողջ աշխարհում ցրուած հայերի ներկայացուցիչներին հաւաքելու էջմիածնում կաթողիկոսի ընտրութեան համար։ Աւելին. Եկեղեցական ժողովի պատգամաւորները անցել են ՍՍՀՄ-ով և որպէս Սովետական Միութեան հիւրեր միանգամայն ձրի կերպով վայելել են լայն հիւրասիրութիւն։

Պրեսս—կոնֆերանսին ներկայ գտնուող ամերիկահայերի պրոգրեսիւ Լիգայի օրգան «Լրաբեր» թերթի թղթակից պ. Պատրիկ Սելեանը դոկտոր Ջոնսոնից խնդրեց իր կարծիքը յայտնելու Հայ Ազգային Խորհրդի դեկլարացիայի մասին, որը ներկայացուած է Սան—Ֆրանսիսկոյի կոնֆերանսի դելեգատներին։ Դրան պ-րն Ջոնսոնը պատասխանեց հետևեալը։

— Ես լիովին և ի սրտէ համաձայն եմ, որ Թուրքիայի կողմից խլուած մարզերը պէտք է որքան կարելի է շուտ, վերադարձուեն Հայաստանին։

Ամերիկահայերի Ազգային Խորհրդի դեկլարացիան, իմ կարծիքով, միանգամայն արդարացի է ու հիմնաւոր։ Թուրքիան դիտաւորեալ կերպով ձգձգում էր իր խլած մարզերի տնտեսական նորմալ զարգացումը։ Դրանց բնակչութիւնը մինչև այժմ էլ անհամաչափօրէն քիչ է. այն ժամանակ, երբ նրանց օրինական բնակիչները ցրուած են ամբողջ աշխարհում։

Թուրքիան աներևակայելի անգթութեամբ բնաջնջում էր հայ բնակչութեանը։ Յաղթող տէրութիւնները առաջին համաշխարհային պատերազմից յետոյ յայտարարեցին, որ արդարացիութիւնը պահանջում է այդ մարզերը վերադարձնել նրանց օրինական տէրերին։ Այն, ինչ որ գրուած է այն ժամանակ, պէտք է այժմ կենսագործուի։

Ես ողջունում եմ դեկլարացիայի հրապարակման փաստը և այն համարում եմ խիստ արդիական։ (ՀՀԿ)